Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի մասին սեմինար

06.12.2011 08:30

ՀՀ փաստաբանների պալատը Ամերիկյան իրավաբանների ընկերակցության CEELI Inc.-ի հայաստանյան ներկայացուցչության հետ իրականացվող «Ռազմավարական դատավարությունը Հայաստանում» ծրագրի շրջանակում հրավիրում է մասնակցելու «Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի կիրառման պրակտիկայի և մեկնաբանության վերլուծյուն» թեմայով դասընթացին:

Դասընթացը կվարեն Լեգելատա իրավաբանական ընկերության փաստաբաններ Սահակյան Սիրանուշը, Մարիամ Ղուլյանը և Գոռ Մարգարյանը:

Դասընթացը տեղի կունենա 2011թ. դեկտեմբերի 16-ին ժամը 18.00-ից մինչև 20.00-ը՝ ՀՀ փաստաբանների պալատի դահլիճում:

Լրացուցիչ տեղեկությունների և դասընթացին գրանցվելու համար խնդրում ենք զանգահարել ՀՀ փաստաբանների պալատ հետևյալ հեռախոսահամարներով՝56-07-76 և կամ պատասխան նամակ ուղարկել info@advocates.am էլ. հասցեին: **Հանդիպման համար կարող եք գրանցվել մինչև 2011թ. դեկտեմբերի 15-ը ներառյալ: Տեղերը սահմանափակ են (20 փաստաբան). դասընթացին կհրավիրվեն ըստ գրանցման առաջնահերթության:**

Խնդրում ենք գրանցվել միայն այն դեպքում, եթե վստահ եք, որ անպայման կմասնակցեք:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })